

«ԳԼՈՄՄԱ» ԱԿ

**Երևանի Ջիվան Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոցի
կառուցման նախագծի**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

ԵՐԵՎԱՆ

2020

Բովանդակություն

Հապավու մներ.....	4
ԸՆԴՆԱՌԻՏԵԴԵԿՈՒԹՈՒՆԱԵՐ.....	5
1 ՆԵՐՄՈՒԹՈՒՆ.....	6
2 ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱՅԻ ՎՐԱԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՆԱՍՆԱՆ ԱՐՏԵՑՈՒՄԵՐ ԵՎ ՍԵՌՄԱԲԱՆՈՒԹՈՒՆ.....	7
2.1 Բնապահպանական գնահատման և ու սու մնասիրու թյ սն շրջանակ 7	7
2.2 Շրջակամիջակայ ըի վրասադրեցու թյ սն գնահատման նպատկը..... 7	7
2.3 Շրջակամիջակայ ըի վրասադրեցու թյ սն նախնական գնահատման հայ սի հաշվետվու թյ սն կազմը 8	8
2.4 Շրջակամիջակայ ըի վրասադրեցու թյ սն նախնական գնահատման հայ սի մեթոդաբանու թյ ու նը 8	8
3 ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱՅԻ ՎՐԱԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՆԱՍՆԱՆ ԱՐՏԵՑԻ ՎԵՐԱԿԱՍ ԿՍԸ.....	9
4 ՆԱՆԵՍԿՐԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՈՒՑ ՆԿՐԱԳԻՐ.....	12
4.1 Ճարտարապետական և սեխնուղ ողիական լ ու ծու մները.....	14
4.2 Ջրանատկարարու մ և ջրահեռացու մ.....	19
4.3 Գազնատկարարու մ և էլ եկարանատկարարման.....	20
4.4 Ջեռու ցու մ և օդախիտու թյ ու ն.....	20
4.5 Շինարարական աշխատանքների կազմակերպու մ.....	20
4.5.1 Ապահովման աշխատանքների կազմակերպու մ.....	22
4.5.2 Կառու ցապատման աշխատանքների կազմակերպու մ.....	23
5 ԵԼԱՏԵՍԻՆՍ ԲԱՄՈՒՆՊԱՏԻՆՊԵՍԱՆԵՐ.....	26
5.1 Տեղանքի ոեղ իեֆը և երկրաբանու թյ ու նը.....	26
5.2 Սեյ սմիկ բնու թագրերը.....	27
5.3 Կլ իմայ սկան պյ մանների հակիրճ նկարագրու թյ ու նը	27
5.4 Օդայ ին ակսան.....	28
5.5 Հողօգտագործու մը և հողայ ին ոեաու րաները.....	28
5.6 Ջրայ ին ոեաու րաներ.....	29
5.7 Բու սական աշխարհ.....	29
5.8 Պատմաշակու թայ ին հու շարձաններ.....	29

6	ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱՆՈՒ ՎՐԱԿԱՆԱՏԵՍՎՈՒՄԵՆՈՒԹՅՈՒՆ	31
6.1	Շինարարու թյ ան վուլ	31
6.1.1	<i>Օրպ ին ախանի աղտոխանու թյ ու ն</i>	31
6.1.2	Աղու կի և թրթու մների սղդեցու թյ ու ն	33
6.1.3	Ջրօգտագործու մ և ջրպ ին հաակարգերի վրասղդեցու թյ ու ն	34
6.1.4	<i>Թախնների առաջացու մ և կառախարու մ</i>	36
6.1.5	Հողպ ին հաակարգերի վրասղդեցու թյ ու ն և մեղմացման միջոցառու մները	38
6.1.6	Աղդեցու թյ ու ն բու սակն աջխարհի վրա	38
6.1.7	Հու շարձանների վրասղդեցու թյ ու ն և մեղմացման միջոցառու մները	39
6.1.8	Աջխասնքի անվանգու թյ ու ն և առողջու թյ ու ն	40
6.1.9	Հնարախոր արտախարգ իրախիձակները և մեղմացման միջոցառու մները	41
6.	ԲԱՄԱԷՊՈՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԵՆԻ ԾՐԱԲԻ	43
6.1	Բաապիսանակն սղդեցու թյ ու նները մեղմացնող միջոցառու մները	43
6.2	Անխարինգ	46
7.	ՀԱՆՐԱԲԻՆՔԱՐՎՈՒՄԵՐ, ՏԵԼԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱՌՄԱՆ ԲՈՂՔԵՐԻ ՄՋԱԳԱԲԱՆ ՄԵՎԱԽՉՄ	47
8.	ՕՏԱՌՈՒՎԾՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱԿ	48
9.	ՀԱԿԷՎԾԵՐ	49
9.1	Հալել ված 1 Բաապիսանակն կառախարան պ ան (ԲԿՊ)	49
9.2	Հալել ված 2 Բաապիսանակն միջոցառու մների մնխարինգի պ ան	79
9.3	Հալել ված 3 Բողոքի գրանցման ձև	85
9.4	Հալել ված 4 Արտախարգ արտախարի մախն հաջվետլու թյ ան ձև	86
9.5	Հալել ված 5 Անարժ գույ թի սեվակնու թյ ան վկպ սկան	87
9.6	Հալել ված 6 Դարոցի առաջին հարկի հատախարիծը	88
9.7	Հալել ված 7 Դարոցի երկրորդ հարկի հատախարիծ	89
9.8	Հալել ված 8 Շինարարապակի կազմակերպան պ ան	90
9.9	Հալել ված 9 Շինարարական աջխասնքների ժամանակացույ ջը	91
9.10	Հալել ված 10 Հանրպ ին քննարկման մանակիցների ցանկ	92
9.11	Հալել ված 11 Ճարտարախարտաակախարգ ին առաջաղունք	93

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայության
ԲԱՄ	Բողոքների արձանագրման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՍԱԲ	Սեյսմիկ անվտանգության բարելավում
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոխտորինգի կենտրոն
ՇՆԿ	Շինարարական նորմեր ու կանոններ
ՍԱԲԾ	Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Մեյամիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում Ջ. Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոցի կառուցում
Ծրագրի նպատակը	ՀՀ դպրոցների սեյամիկ անվտանգության բարելավում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Ձեռնարկող	«ԳԼՈՄՄԱ» ԱԿ
Ձեռնարկողի հասցե	ք. Երևան, Մաշտոցի պողոտա 51, բն. 30
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	Էլ. փոստ՝ glomma96@rambler.ru Հեռ.՝ (+374 10) 581 319; (+374 91) 473 294
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Լուկաշինի 1-ին փողոց, 5 շենք
Կառույցի կառուցապատման մակերեսը	3 750 ք.մ
Ընդհանուր հողատարածքի մակերեսը	1. 9553 հա
Դպրոցի նախագծային հզորությունը	436 աշակերտ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Երևանի Ջ. Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոցի կառուցումն իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակում Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:
2. Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանն, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:
3. Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի յուրաքանչյուր ենթածրագրի համար իրականացվում է բնապահպանական ազդեցության գնահատում՝ ԱԶԲ Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.) և ՀՀ օրենսդրության համաձայն:
4. Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) Հոդված 14, կետ 6-ի, 1500 ք.մ-ից բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության կառույցները դասվում են «Գ» կատեգորիա և գործունեությունը պահանջվում է նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:
5. Երևանի նախագծվող Ջ. Աբրահամյանի անվան թիվ 111 դպրոցի կառույցների կառուցապատման մակերեսը կազմում է 3750 ք.մ (ներառյալ՝ դպ.-ի կաթսայատունը), ուստի դպրոցի նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում, ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ

6. Դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի համար մշակվել է Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈՒՇ) փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ՍԱԲ ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամի (ՀՏՁՀ) համար, որը հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմինը: Փաստաթուղթը ներառում է նաև Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները, կազմակերպումը և ԲՄՄՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերում:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ բնապահպանական մեղմացման միջոցառումները:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը

8. ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

2.4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը

9. Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի-բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող դպրոցի աշխատանքային նախագիծը
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները,

քարտեզները

- ծրագրի իրականացման համար մշակված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈԻՇ) փաստաթուղթը
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- ազդակակիթ և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

10. Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.
11. **ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, զննությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:
12. **ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:
13. **ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:
14. **ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
15. **ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում

բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառվումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

16. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

17. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

18. **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

19. **ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30** «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23 հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

Ուղեցույցներ և ստանդարտներ


20. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

21. **Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

22. Ձ. Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոցը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի 1-ին փողոց, 5-րդ շենք հասցեում գործող թիվ 111 հիմնական դպրոցի տարածքում, իսկ գործող թիվ 111 դպրոցը նախատեսվում է ապամոնտաժել: Գործող դպրոցի տեղադիրքը համայնքում և իրավիճակային պատկերը ներկայացված է Նկ.1-ում:
23. Նախագծվող դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1.9553 հա: Ներկայացվող գործունեության ընթացքում դպրոցի կառույցի կառուցապատման, տարածքի բարեկարգման և կանաչապատ գոտիների բարեկարգման աշխատանքների շրջանակը կկազմի 16 377 ք.մ տարածքը, մասնավորապես՝ դպրոցի մասնաշենքերի (ներառյալ՝ կաթսայատունը) կառուցապատման մակերեսը կազմում է 3 750 ք.մ, կբարեկարգվի 7 029 ք.մ տարածք և 5 598 ք.մ մակերեսով կանաչ գոտի:
24. Դպրոցի նախագծման աշխատանքների հիմք են հանդիսացել ՀՏՁՀ-ի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի, ճարտարապետահատակագծային առաջադրանքի (*Հավելված 11*) փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ գործող քաղաքաշինական նորմերը:
25. Երևանի թիվ 111 հիմնական դպրոցը նախատեսվում է 1-ից 9 զուգահեռ երկու դասարաններով և 436 աշակերտների համար:

Նկ.1 Նախագծվող դպրոցի տարածքի իրավիճակային հատակագիծը, մերձակայքը և տեղադիրքը Երևան քաղաքում:



4.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները

26. Դպրոցի հատակագծային լուծումներում հաշվի են առնված դպրոցի տարրական և միջին դպրոցների երկհարկանի մասնաշենքերը, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, ադմինիստրատիվ մասնաշենքեր, նոր կաթսայատուն, բացօթյա մարզահրապարակ և խաղահրապարակ: Ելնելով դպրոցի ֆունկցիոնալ կառուցվածքից՝ հիմնական բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձին մուտքեր, որոնք կապահովեն տարբեր տարիքային խմբերի անխափան հոսքերը: Մուտքերի տեղադիրքերի ընտրությունն իրականացված է նաև այնպես, որ դպրոցի համալիրն ամեն ուղղությամբ ունենա առնվազն 2 էվակուացիոն ելքեր: Նախագծվող դպրոցի հիմնական մուտքը նախատեսվում է Լուկաշինի փողոցի կողմից: Դպրոցի գլխավոր հատակագիծը բերվում է Նկ. 2-ում:
27. Նախագծվող դպրոցի համալիրը բաղկացած է 8 մասնաշենքերից («A»-ից «H»), որոնք իրար հետ կապվելու են դեֆորմացիոն կարերով և անջատված կլինեն ներքին տարածքներով:
28. Նախագծվող դպրոցի «B» և «G» մասնաշենքերը ծառայելու են տարրական և միջին դպրոցների համար և նախագծվում են որպես երկհարկանի կառույցներ: «G» մասնաշենքում են նախագծված տարրական դպրոցի դասասենյակները, վարչական սենյակները և ուսուցչանոցը: «B» մասնաշենքում նախագծվել են միջին դպրոցի դասասենյակները, լաբորատոր սենյակները, ինֆորմատիկայի և օտար լեզվի դասասենյակները, դպրոցի գրադարանը: «B» և «G» մասնաշենքերում նախագծվել են նաև սանհանգույցներ և այլ վարչական սենյակներ:
29. «B» և «G» մասնաշենքերի տանիքը նախատեսվում է կառուցել լանջավոր, իսկ ծածկույթի համար կօգտագործվի պրոֆիլավորված գործարանային ներկված ցինկապատ թիթեղներ: Մասնաշենքերի տանիքը կունենա կազմակերպված արտաքին ջրահեռացում: Դպրոցի առաջին և երկրորդ հարկերի հատակագծերը բերվում են *Հավելված 6 և 7-ում*:

30. Դպրոցի մնացած 6 մասնաշենքերը՝ «A», «C», «D», «E», «F» և «H», նախագծվում են որպես միահարկ կառույցներ: «A» մասնաշենքում նախատեսվում է դպրոցի ճաշարանը, տնօրենի և տնօրենի տեղակալի սենյակները, հաշվապահի և աստամնաբուժական սենյակները: Դպրոցի ճաշարանին կից գործող օժանդակ սենյակները (սպասքի լվացման, սառը և տաք կերակուրների պատրաստման արտադրամասը), տեխնիկական անձնակազմի և մարզիչի սենյակները նախատեսվում են «E» մասնաշենքում, ինչպես նաև այստեղ կլինեն հանդերձարանները և ցնցուղարանները, հավաքարարի սենյակը: «H» մասնաշենքում նախագծվել են տեխնիկական սենյակները, ներառյալ՝ դպրոցի պահեստը, հավաքարարի սենյակները, մարզիչի սենյակը:
31. «A», «C», «D», «E», «F» և «H» մասնաշենքերի տանիքը նախագծվում է հարթ՝ կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ: Տանիքի ջրամեկուսացման համար նախատեսվում է օգտագործել պենոպոլիստիրոլի երկշերտ ջրամեկուսիչ թաղանթ:
32. Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների տեսանկյունից, բոլոր պատերն արտաքինից կջերմամեկուսացվեն 90մմ հաստությամբ հանքային բամբակով, հարթ տանիքները՝ 100մմ էքստրուդացված պենոպոլիստերով, իսկ ձեղնահարկերը՝ փքապերլիտե պարկերով և 100մմ հաստությամբ խարամի շերտով:
33. Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից, բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ դպրոցի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ:
34. Մասնաշենքերի արտաքին ճակատների հարդարման լուծումներում կօգտագործվի դեկորատիվ սվաղ և ներկման լուծումներ: Դպրոցի ներքին հարդարման լուծումներում միջանցքներում և սրահներում նախատեսվում են չսայթակող կերամոզրանիտե հատակներ, դասասենյակներում և դահլիճներում՝ վինիլային 2մմ և 4 մմ հատակներ:
35. Դպրոցում նախատեսվում են այլումինե արտաքին դռներ, վիտրաժներ և պատուհաններ, իսկ ներքին դռները կլինեն ՄԴՖ տեսակի: Ներքին հարդարման աշխատանքները կիրականացվեն բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերից:

36. Նախագծման լուծումներում մեծ ուշադրություն են դարձված հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ խմբերի տեղաշարժն ապահովող և այլ հարմարեցված լուծումներին: Այսպես օրինակ դպրոցի միջին և տարրական մասնաշենքերում («B» և «G») հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ սակավաշարժ խմբերի համար նախագծվում են վերելակներ՝ $m=630կգ$, և $V=1.0մ/վրկ$ պարամետրերով, թեքահարթակներ՝ արտաքին մուտքերում, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ:
37. Նախագծված դպրոցի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1.-ում:
38. Բարեկարգման աշխատանքների շրջանակում դպրոցի տարածքում նախատեսվում է ասֆալտե ծածկույթով խաղահրապարակ, անցուղիներ, ճանապարհներ և հարթակներ: Մասնաշենքերի պարագծով նախատեսվում է նոր սավաճքի իրականացում՝ բրեկչա տիպի ծածկով:
39. Նախագծվող դպրոցի ողջ վարչական սահմանով նախատեսվում է նոր ցանկապատի՝ ներկված մետաղական տուփաձև խողովակներից, տեղադրում:
40. Դպրոցին կից նախատեսվում է կառուցել 24. 6 ք.մ. մակերեսով կաթսայատուն: Կաթսայատունը նախագծվում է որպես ե/բ սյունահեծանային միահարկ կառույց, կանոնավոր տուփի շարվածքից, իսկ պատերի արտաքին լուծումներում կօգտագործվեն 50 մմ ց/ա բարձրորակ սվաղ և ճակատային ներկ, ներքին լուծումներում՝ բարձրորակ սվաղ և լատեքսային ներկեր:
41. Դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ տրամադրված տեխնիկական պայմանների և ՀՀ շինարարական նորմերի:

Աղյուսակ 1

Նախագծվող դպրոցի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Մասնաշենքերի թիվը	հատ	8
Ընդհանուր հողատարածքի մակ.	Հա	1.9553
Դպրոցի շենքի կառուցապատման մակ.	ք. մ	3 725
Դպրոցի նախագծվող տարողունակությունը	աշակերտ	436
Մեկ աշակերտին հատկացվող միջ. մակ.	ք.մ	2.8
Ուսումնական սենյակների թիվը	հատ	22
Ուսումնական սենյակների մակ.	թ.մ	1258.0
Սանհանգույցների թիվը	հատ	19
Բարեկարգման աշխատանքներ		
Բացօթյա մարզահրապարակ	հատ	1
Բարեկարգման մակ. (ներառյալ կանաչապատում)	ք.մ	12 628
Բացօթյա մարզահրապարակի մակ.	ք.մ	3 124
Բացօթյա խաղահրապարակի մակ.	ք.մ	240
Ասֆալտապատման գոտու մակ.	ք.մ	3 665
Կանաչապատման գոտու մակ.	ք.մ	5 598
Հիմնական սենյակների մակերեսը		
Հանդիսությունների դահլիճ	ք.մ	285
Մարզադահլիճ	ք.մ	360
Ուսուցչանոցների մակ.	ք.մ	69.7
Բուժկետ	ք.մ	25.9
Գրադարան	ք.մ	98.3
Սանհանգույց	ք.մ	139.6
Ինժեներական ցանցեր		
Էլ. սնուցում	կվտ-ժամ	148.0
Ջրամատակարարում	լ/վրկ	1.6
Կոյուղի	լ/վրկ	3.2
Ջեռուցում		
Կաթսայատան մակերես	ք.մ	24.6
Կաթսաների քանակ	հատ	2
Կաթսաների պահանջվող հզորություն	կվտ-ժամ	300
Տաք ջրամատակարարում		
Ծավալային էլեկտրական ջրատաքացուցիչներ		
Էլ. ջրատաքացուցիչ-50լ	հատ	2
Էլ. ջրատաքացուցիչ-80լ	հատ	6
Էլ. ջրատաքացուցիչ-100լ	հատ	7
Արևային էլեկտրաէներգիայի մատակարարում		
Արևային վահանակ (126 հատ բազմաբյուրեղ)	կվտ	36

4.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

42. Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված (17.10.2019թ., № ԱԵ7372) տեխնիկական պայմանների համաձայն, այն է՝ ջրամատակարարումն կիրականացվի Լուկաշին 1-ին փողոցով անցնող $d=150$ մմ քաղաքային ջրագծից, իսկ ջրահեռացման գործընթացը՝ Լուկաշին 1-ին փողոցով անցնող $d=300$ մմ կոյուղագծից:
43. Դպրոցի տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերն որոշվել են հաշվի առնելով դպրոցի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվում է $Q_{max}/վրկ=1.6$ լ/վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ 2.5 լ/վրկ (2 շիթ):
44. Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել թվով 15 էլեկտրական ծավալային ջրատաքացուցիչների միջոցով (տես աղ.1): Այս դեպքում մագիստրալ խողովակների, կանգնակների ու ճյուղավորումների համար կօգտագործվեն $d=25, 20$ մմ և $P=0.6$ ՄՊա պոլիպրոպիլենային խողովակներ:
45. Կոյուղու ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել ինքնահոս՝ $\Phi 50$ - $\Phi 100$ մմ տրամագծի պոլիպրոպիլենե խողովակներով: Կոյուղու կանգնակների վրա նախատեսված են ստուգիչներ՝ կոյուղու համակարգում առաջացած խցանումները վերացնելու նպատակով: Կոյուղու ներքին ցանցի կանգնակները կտեղադրվեն շախտաներում՝ ստուգիչների հատվածում ունենալով դռնակներ:
46. Անձրևաջրերի հեռացումը տարածքից նախատեսվում է իրականացնել ասֆալտապատ ուղիներով ինքնահոս եղանակով՝ նիշերի տարբերությամբ պայմանավորված, դեպի դպրոցի կանչապատ գոտիներ:

4.3 Գազամատակարարում և Էլեկտրամատակարարման

47. Դպրոցի գազամատակարարման և Էլեկտրասնուցման տեխնիկական պայմանները ձեռք կբերվեն գործող պետական կարգի համաձայն:

4.4 Ջեռուցում և օդափոխություն

48. Դպրոցի ջեռուցման գործընթացը նախատեսվում է կազմակերպել նորակառույց կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային երկու կաթսաների միջոցով բնական գազի այրմամբ՝ 8 000 կկալ/մ³ այրման ջերմությամբ, իսկ որպես պահուստային վառելիք անհրաժեշտության դեպքում կօգտագործվի հեղուկ վառելիք՝ 10 000 կկալ/մ³ այրման ջերմությամբ: Բնական գազի հաշվարկային առավելագույն ծախսը գնահատվում է 49,5 խ. մ/ժ:

49. Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսայի և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում:

50. Դպրոցի օդափոխության համակարգը նախատեսվում է ՀՀ գործող նորմերին համապատասխան: Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման հարկադրական համակարգեր: Որպես ջերմակիր կօգտագործվի կաթսայատանից եկող տաք ջուրը՝ 80/60 °C ջերմաստիճանային տարբերությամբ:

4.5 Շինարարական աշխատանքների կազմակերպում

51. Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքերի (ընդհանուր 5 278.9 ք.մ մակերեսով), ներառյալ կաթսայատան երկու շենքերի (123.2 ք.մ և 26.4 ք.մ) ապամոնտաժման աշխատանքներ

- նոր դպրոցի շենքի և կաթսայատան կառուցում

- տարածքի վերականգնում, բարեկարգում և կանաչապատման աշխատանքներ:

52. Համաձայն մշակված շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի՝ *նախաշինարարական աշխատանքների* փուլում կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները: Շինարարական հրապարակի կազմակերպման պլանը բերվում է *Հավելված 8. -ում*: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես դպրոցի տարածքի վարչական սահմանների ներսում և կազմակերպման պլանում հաշվի են առնված գործող նորմերով պահանջվող միջոցառումները, մասնավորապես՝

- տարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում

- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները

- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, գուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)

- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը

- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

53. Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

54. *Շինարարության փուլում* իրականացվող ապամոնտաժման և կառուցապատման գործողությունների նկարագրությունները բերվում է ստորև ներկայացվող ենթաբաժիններում:

4.5.1 Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում

55. Գոյություն ունեցող թիվ 111 դպրոցի շենքի քանդման աշխատանքներն իրականացվելու են ՀՀ կառավարության *N 87-Ս* (06.02.2019) *որոշման* համաձայն: Մույն որոշման կետ 2-ով սահմանված կարգով դպրոցի շենք-շինությունների քանդման արդյունքում առաջացող շինանյութը սեփականության իրավունքով անհատույց կհանձնվի դպրոցի կառուցման աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպությանը: Ապամոնտաժման աշխատանքների ծավալները հաշվի առնված չեն դպրոցի ծավալանախահաշվային փաստաթղթերում: Ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբի տեղափոխման աշխատանքները նույնպես կիրականացվեն շինարար կապալառուի սեփական միջոցների հաշվին:
56. Ներկայացվող գործունեության շրջանակում գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով, ինչը հնարավոր կդարձնի խուսափել քանդման ընթացքում գործունեությունից ակնկալվող բնապահպանական ազդեցությունները, մասնավորապես՝ աղմուկի և փոշու բարձր մակարդակների առաջացումը և կկրճատվի շինարարական աղբի ծավալները, քանի որ վերը նշված որոշման համաձայն՝ շինարարական կազմակերպությունն ապամոնտաժման աշխատանքները կկազմակերպի այնպես, որ ապամոնտաժման արդյունքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի շինարարական նյութերը կպահպանվեն և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:
57. Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և զոդման տեխնիկա և կբացառվի այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլ առ փուլ: Սկզբում կիրականացվեն դպրոցի շենքի թիթեղյա տանիքի և փայտե կոնստրուկցիաների, դռների, պատուհանների և մետաղական ճաղավանդակների ապամենտաժումը, քանի որ նշված հումքը ենթակա է կրկնակի օգտագործման, որից հետո կիրականացվեն սկզբում երրորդ հարկի ծածկի ապամոնտաժումը, իսկ այնուհետև՝

կտրող գործիքների օգնությամբ մասնաշենքերի կոնստրուկտիվ կարերի և պատերի քարերի ապամոնտաժման գործողությունները, ինչպես նաև ջրթող խողովակների և ձևավոր մասերի հեռացման աշխատանքները: Այնուհետև նույն հաջորդականությամբ կիրականացվեն երկրորդ և առաջին հարկերի ապամոնտաժումը: Ծածկերի և միջհարկային սալերի ապամոնտաժումը կիրականցնի զողման միջոցով, որից հետո անջատված սալերը և սյուները ճուպանների միջոցով կմիացվեն թրթուռավոր կռունկին և դանդաղ կտեղափոխվեն հրապարակի ազատ տարածություն:

58. Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղապոխվեն շինկապալառուի պահեստ և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից՝ այլ շինարարական աշխատանքներում, իսկ գոյացած շինարարական աղբի ծավալը, որը գնահատվում է շուրջ 8 000 տ, կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր (Ն2391-Ա, 2016թ. հունիսի 30):
59. Երկրորդային օգտագործման համար պիտանի հումքի ծավալները սույն հաշվետվությունում չեն ներկայացվում, քանի որ ինչպես վերը նշվեց դրանք հաշվի չեն առնված ներկայացվող գործունեության ծավալաթերթերում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության *N 87-Ս* (06.02.2019) որոշումը առ այն, որ վերջիններս անհատույց սեփականության իրավունքով տրամադրվելու են դպրոցի շինարարության մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուին:
60. Ապամոնտաժման աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 4 ամիս:

4.5.2 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում

61. Նախագծվող դպրոցի շին աշխատանքները կսկսվեն ապամոնտաժման աշխատանքների ավարտից և դպրոցի տարածքը շինաղբից մաքրելուց հետո: Շինարարական աշխատանքների տևողությունը գնահատվում է 24 ամիս: Շինարարական

աշխատանքների իրականացման հաջորդականությունը և ժամանակացույցը բերվում է *Հավելված 9*-ում:

62. Շինաշխատանքների իրականացումը կիրականացվի մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:
63. Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ստորև բերվող ծավալի հողային աշխատանքները.
- հողային հանույթ՝ 5 800 խ. մ
 - հետ լիցք՝ 4 600 խ. մ
 - տեղափոխվող/հեռացվող հանույթ՝ 1 200 խ. մ
64. Նախագծվող դպրոցի շենքի շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած 1 200 խ. մ շին աղբ/ավելուրդ գրունտը կտեղափոխվի և կթափոնակույտվի աղբավայրում:
65. ՍՍԲ ծրագրի նշանակությունից և նպատակներից ելնելով դպրոցի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն բացառապես լիցենզավորված մատակարարներից:
66. Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով Երևան քաղաքին մոտ բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:
67. Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը

հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

68. Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից: Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի 0,4 կՎտ օդային մալուխային գծից: Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստերից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ՁԻՖ-55 մակնիշի): Աղ. 2-ում ներկայացվում են հիմնական պահանջվող ռեսուրսների քանակը, իսկ

Աղյուսակ 2

Շինարարության ժամանակ պահանջվող ռեսուրսների քանակը

Անվանումը	Չափման միավորը	24 ամիս (շին. տևողությունը)
Էլեկտրաէներգիա	ԿՎա	83.5
Վառելիք	Տ	10
Ջուր	լ/վրկ	0.2
Խտացրած օդ (կոմպրեսոր)	հատ	1

69. Շինարարության ընթացքում պահանջվող հիմնական աշխատողների միջին թիվը գնահատվում է 35 մարդ, որից ինժեներական կազմը՝ 2 մարդ և ծառայողական աշխատողներ՝ 3 մարդ:

5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

70. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում Լուկաշինի 1-ին հասցեում գտնվող Ջ. Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոցի տարածքում:
71. *Գեոմորֆոլոգիական* տեսակետից բնութագրվող տարածքը գտնվում է Շահումյանի հարթակի վրա: Բնութագրվող տեղամասում տարածված են հրաբախային ապարները, ծածկված՝ պրոլյուվիալ, էյուվիալ, դելյուվիալ նստվածքներով:
72. Բնութագրվող տարածքը հանդիսանում է արարատյան ակունյաստիվ գոգավորության հյուսիսային վերջավորության մի հատված, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 957-963մ սահմաններում:
73. *Հիդրոերկրաբանական* տեսակետից ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրունտային ջրերը տարածված չեն մինչև 30մ խորություն:
74. *Ֆիզիկաերկրաբանական տեսակետից* նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):
75. *Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքի տեսակետից* կատարված ուսումնասիրությունների և գոյություն ունեցող տվյալների համաձայն՝ տեղամասում վերևից ներքև հաջորդում են հետևյալ գրունտները.
- Շերտ 1՝ լիցքային գրունտ: Հզորությունը 0. 5-1. 0 մ: Տարածված է ամենուր: Գրունտն իրենից ներկայացնում է տեղական տարբեր գրունտների մեխանիկական խառնուրդ:
 - Շերտ 2՝ խճային գրունտ բեկորներով: Հզորությունը մինչև 2. 4մ է: Շերտը ունի մասնակի տարածվածություն և հանդիպել է միայն 4-րդ հորատանցքերում:

- Շերտ 3՝ խոշորաբեկորային բազալտներ, տեղ-տեղ խարամապարկերով, որոնք չեն ենթարկված ոչ ուղղահայաց և ոչ էլ հորիզոնական տարածման: Այս գրունտները տարածված են ամենուր, անցած հզորությունը 20մ և ավելի է:

76. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում *տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները* գնահատվում են բարենպաստ նախագծվող դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար:

5.2 Սեյսմիկ բնութագրերը

77. Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, բնութագրվող տեղամասը գտնվում է սեյսմիկ *երրորդ գոտում*, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.4g$ և ունի *9 և ավելի* բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

78. Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է չորային կլիմայական պայմանները: Օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է $+41^{\circ}C$, իսկ նվազագույնը՝ $-30^{\circ}C$: Տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 211 մմ, ձյան ծածկի քաշը՝ 70կգ/ք.մ: Բնահողի առավելագույն սառեցման խորությունը կազմում է 0.7մ: Քամու գերակայող ուղղությունը ձմռանը հարավ արևմտյան է, իսկ ամռանը՝ հյուսիս արևելյան, բնութագրական է 2.4 մ/վրկ միջին արագությունը:

5.4 Օդային ավազան

79. Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Համաձայն ՀՄԿ-ի 2019 թվականի տարեկան հաշվետվության՝ Երևան քաղաքում ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին տարեկան կոնցենտրացիաները դիտվել են 0.005 մգ/մ^3 տիրույթում և չեն գերազանցել նշված աղտոտիչների գործող ՍԹԿ-ները ($\text{ՍԹԿ}_{\text{NO}_2} = 0.04 \text{ մգ/մ}^3$, $\text{ՍԹԿ}_{\text{SO}_2} = 0.05 \text{ մգ/մ}^3$):
80. Երևան քաղաքում ընդհանուր փոշու միջին տարեկան և ամսական կոնցենտրացիաները եւս չեն գերազանցել ՍԹԿ-ները ($\text{ՍԹԿ}_{\text{PM}} = 0.015 \text{ մգ/մ}^3$), սակայն քաղաքի որոշ հատվածներում՝ հիմնականում Կենտրոն համայնքում, ընդհանուր փոշու մասնիկների կոնցենտրացիաները որոշ օրերի գերազանցել են սահմանային թույլտրելի կոնցենտրացիաները:

5.5 Հողօգտագործումը և հողային ռեսուրսները

81. Կառուցապատվող տարածքը հանդիսանում է Երևանի թիվ 111 դպրոցին ՀՀ կրթության և գիտության նախարարությանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով (25/11/2014թ., N10777 պայմանագիր) տրամադրված գույք: Ըստ վկայականի՝ հողատարածքն ունի բնակավայրային և հասարակական կառուցապատման նշանակություններ: Հավելված 5-ում ներկայացվում է դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:
82. Կառուցապատվող տարածքում ձեռնարկատիրական որևէ այլ գործունեություն չի իրականացվում և հողատարածքն ամբողջությամբ օգտագործվում է թիվ 111 դպրոցի կողմից:

83. Բնութագրվող տեղամասը տարածքի յուրացված հատվածներում ներկայացված է ասֆալտե ծածկույթի տեսքով, իսկ մնացած հատվածները զբաղեցնում են կանաչ գոտիները:

5.6 Ջրային ռեսուրսներ

84. Բնութագրվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքում գրունտային ջրերը չեն հայտնաբերվել մինչև 30 մ խորություններում:

5.7 Բուսական աշխարհ

85. Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները:

86. Դպրոցի տարածքում հիմնական մասնաշենքերին զուգահեռ, ինչպես նաև Լուկաշինի փողոցին զուգահեռ հատվածներում աճում են տարբեր տարիքի ծառատեսակներ:

87. Կանաչապատ գոտու ոռոգումն իրականացվում է ավանդական եղանակով, այն է՝ դպրոցի աշխատակիցների ուժերով, գործունեության տեղանքում բացակայում է ոռոգման քաղաքային համակարգը:


5.8 Պատմամշակութային հուշարձաններ

88. Դպրոցի բակում է գտնվում ՀՀ ազգային հերոս Ջիվան Աբրահամյանի կիսանդրին: Ազգային հերոսի հուշարձանը տեղադրվել է 2011թ. -ի սեպտեմբերին: Այստեղ է գտնվում նաև 1994թ.ին դպրոցի և Աջափնյակ համայնքի նախաձեռնությամբ կառուցված

Արցախյան ազատամարտում զոհված շրջանավարտների հիշատակը հավերժացնող հուշաղբյուր հուշարձանը: Հուշարձանների լուսանկարները ներկայացված են նկ. 3-ում: Հուշարձանները ներառված չեն ՀՀ Երևան քաղաքի պատմության և անշարժ հուշարձանների պետական ցանկում:

Նկ. 3

Դպրոցի բակում առկա հուշարձանների լուսանկարներ (ձախից՝ Ջ. Աբրահամյանի կիսանդրին, աջից՝ հուշաղբյուրը):



6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

89. Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները գնահատվում են դպրոցի ապամոնտաժման և կառուցման գործողությունների ընթացքում, սակայն ազդեցությունները կլինեն ժամանակավոր՝ հաշվի առնելով շին աշխատանքների ժամանակավոր բնույթը և տեղայնացված՝ ընգրկելով հիմնականում դպրոցի կառուցապատվող տարածքը:

6.1 Շինարարության փուլ

6.1.1 Օդային ավազանի աղտոտվածություն

90. Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

K_1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K_2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէոզոլային մասնիկների, 0.02

K_3 –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.4

K_4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K₅–ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K₆–ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ $2 \times 22 = 44$ օր կամ

$44 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 352 \text{ ժամ/շինարարություն} :$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է 5 800 խմ կամ 19 915 տոննա:

$19\,915 \text{ տոննա} / 352 \text{ ժամ} = 56.57 \text{ տ/ժ}$

$Q = (0.05 \times 0.02 \times 2.4 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 56.57 \times 10^6) / 3600 = 0.91 \text{ գ/վ}$

Այսպիսով, գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$0.91 \text{ գ/վ} \times 352 \text{ ժ} / 2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 1.15 \text{տ}$

91. Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի դպրոցի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Նշված արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես՝

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակում մակերեսների ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը),

- *փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն)* շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը:

92. Օդային ավազանի պաշտպանությանն ուղղված միջոցառումների համալիր ցանկը ներկայացվում է մեղմացնող միջոցառումների պլանում՝ *Հավելված 1 (տես 5.1 էնթաքաժին, Օդի աղտոտում և փոշուկ առավարում)*:

93. Ծրագրի շրջանակում հարակից բնակելի և հասարակական շենքերից ստացված բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

94. Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակները գնահատվում են գոյություն ունեցող դպրոցի շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում: Հաշվի առնելով այն, որ դպրոցի քանդումը նախատեսվում է իրականացնել ապամոնտաժման եղանակով, այն է՝ բացառելով որևէ խոշոր տեխնիկայի կիրառումը, ապա աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Շին աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 14:00-ից 18:00:

95. Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարակից ազդակակիրների հեռավորությունը դպրոցի տարածքից (≥ 50 մ):

96. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

97. Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Հավելված 1. - ու մ* (տես 5.2 ենթաբաժին, Աղ մ ու կ ի և թր թռ ու մ ն եր ի մ ա կ ա ղ ա ղ ն եր ի կ առ ա վ ա ղ ու մ): Ծրագրի շրջանակում հնարավոր բոլորների դեպքում նախատեսվում է իրականացնել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

98. Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Դպրոցի մասնաշենքերի ապամոնտաժման և նոր շենքի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

- *Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ 12 628 ք.մ

K – 1 մ² օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 մ³,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝ 22 օր x ((24 կառ. +4 քանդ.) -(6 (նոյեմբերից ապրիլ) x 2) ամիս = 352 օր

K₁- ջրցանի օրական քանակը՝ 1

Այսպիսով՝ $V = 12\,628 \times 0.0015 \times 352 = 6\,667.6$ խ մ/շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 6 667.6 խ մ:

- *Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝

n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է՝ 5 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 մ³,

n₁ - բանվորների թիվն է՝ միջին 30 մարդ

N₁ - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 մ³/մարդ օր

T-աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում՝ 22 օր
x (24 + 4) ամիս = 616 օր :

Այսպիսով՝ $W = (5 \times 0.016 + 30 \times 0.025) \times 616 = 511.28$ խ.մ / շինարարությունն ժամանակ կամ 0.830 խ. մ/օրական:

99. Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի դպրոցի տարածքին կից՝ Լուկաշինի փողոցով անցնող համայնքային ջրազծից:

100. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ տեղամասին կից չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ:

101. Անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները և արտահոսքերը:

102. Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում ևս չի կանխատեսվում՝ հաշվի առնելով աշխատանքների բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ

կնվազեցնի հնարավոր հոսքաջրերի արտահոսքերը տեղամասից: Գնահատվում են կեղտաջրերի (բետոնաջուր և այլն) առաջացում, որոնց հեռացման համար հրապարակում կպահվի կեղտաջրերի տարա, որտեղ կհեռացվեն կեղտաջրերը:

103. Տարայում (հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ կօգտագործվի ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

104. Կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Հավելված 1. - ու մ* (տես 5.3 ենթագլուխ, 6. գլուխ):

6.1.4 Թափոնների առաջացում և կառավարում

105. Շինարարական աղբի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղբոտվածության: Նշված ազդեցություններից խուսափելու համար շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաքիչն երեք օրը մեկ) տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր (Ն2391-Ա, 2016թ. հունիսի 30):

106. Շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ դպրոցի մասնաշենքերի ապամոնտաժումից և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են IV դասի վտանգավորությամբ թափոնների առաջացում՝ ստորև ներկայացվող տեսակային կազմով.

Թափոնի անվանումը	Ծածկագիրը
շենքերի քանդումից առաջացած շին աղբ	91200601 01 00 4
շինարարության փայտանյութի թափոններ	91200601 01 00 4
պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված սալիկներ	39901200 01 00 4
ասֆալտի և ասալտբետոնի խառնուրդի մնացորդներ	31401200 01 00 4
կարծր տեսքով բիտում և ասֆլատ	31403502 01 00 4

107. Նշված թափոնների կառավարումը (բացառությամբ փայտանյութի) կիրականացվի ՀՀ կառավարության N 30 արձանագրային որոշման համաձայն, կտեղափոխվի և կթափոնակույտվի աղբավայրում:

108. Ապամոնտաժման ընթացքում գոյացած «շինարարության փայտանյութի թափոնները» գնահատվում են երկրորդայի օգտագործման համար պիտանի: Վերջիններս կվերամշակվեն և կօգտագործվեն որպես երկրորդային հումք կապալառուի կողմից այլ շին աշխատանքներում: Այլ նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ, փայտանյութ, դոներ, պատուհաններ, խողովակներ) կտեսակավորվեն և նույնպես կօգտագործվեն որպես երկրորդային հումք:

109. Գործունեության ընթացքում ապամոնտաժման գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 8 000 տ, իսկ կառուցապատման աշխատանքների ընթացքում առաջացած շին աղբը/ավելորդ գրունտ կկազմի 1 200 խ. մ:

110. Քսայուղերի և հեղուկ վառելիքի թափոնների առաջացում գործունեության ընթացքում չի կանխատեսվում: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդները կհավաքվեն և կրկին կօգտագործվեն կապալառուի կողմից:

111. Գործունեության ընթացքում կենցաղային աղբի մնացորդները հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբի տարաներ, որտեղից աղբը կանոնավոր կերպով կհեռացվի հանրային աղբամաններ:

112. Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերվում է *Հավելված 1* (տես 8 գլուխ, Թափոնների և նյութերի կառավարման պլան):

6.1.5 Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները

113. Ինչպես նշվեց 4.5.2 ենթաբաժնում ներկայացվող գործունեության հողային և բարեկարգման աշխատանքների ընթացքում կգոյանա շուրջ 5 800 խ. մ հողային հանույթ, որից 4 600 խ. մ հանույթը կօգտագործվի հետ լիցքի նպատակով, իսկ մնացորդային 1 200 խ. մ գրունտը գնահատվում է աշխատանքների համար ոչ պիտանի և կտեղափոխվի քաղաքային աղբավայր:

114. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ տարածքում առկա բուսահողի վրա չի գնահատվում, քանի որ նախագծվող դպրոցը կկառուցվի տարածքի արդեն իսկ հին դպրոցի շենքով յուրացված հատվածում, որտեղ բացակայում է բուսահողը:

6.1.6 Ազդեցություն բուսական աշխարհի վրա

115. Ներկայացվող գործունեության ընթացքում ազդեցության ենթարկվող ծառերի թիվը գնահատվում 62: Դպրոցի կանաչապատման նախագծի համաձայն՝ թվով 22 ծառ կվերատնկվեն, իսկ 40 ծառ, որոնք աճում են գոյություն ունեցող դպրոցի շենքի անմիջապես հարևանությամբ նախատեսվում են հատել, քանի որ դրանք խանգարում են գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժման և շինարարական աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև հաշվի առնելով նշված ծառերի կենսունակությունը և սանիտարական վիճակը:

116. Սույն հայտին կից ներկայացվում է նաև ծառերի հեռացման վերաբերյալ «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված

եզրակացությունը:

117. Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքների շրջանակում դպրոցի տարածքը կհամալրվի թվով 240 (1:6 հարաբերությամբ) արժեքավոր ծառատեսակներով, մասնավորապես՝ նախատեսվում է տնկել հացենիներ (80 հատ), արևելյան թույաներ (80 հատ) և հուդայածառեր (80 հատ): Ծառատեսակների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով նաև նշված տեսակների Երևան քաղաքի բնակլիմայական պայմաններին հարմարվելու գործոնը: Բարեկարգման և կանաչապատման նախագիծը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ և ներկայացվում է սույն հատին կից:
118. Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն տարածքի գոյություն ունեցող կանաչ հատվածներում, որտեղ առկա է բնահող և լրացուցիչ բնահողի մատակարարում չի նախատեսվում ներկայացվող գործունեության ընթացքում:
119. Նորատունկ բուսականության խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը, իսկ բուսականության վիճակի մշտադիտարկումները կիրականացվեն Ծրագրի պատվիրատու ՀՏԶ-ի կողմից՝ ըստ հաստատված մոնիտորինգային պլանի: Ծրագրի շրջանակում գործող հետշինարարական մոնիտորինգը սահմանվում է *մեկ տարի*, որի ընթացքում կպշոդականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:
120. Դպրոցի տարածքի կանաչապատ գոտիներում նախագծվում է ոռոգման ցանցը Φ 63; 50; 40; 32; 25 մմ արտաքին տրամագծով պոլիպրոպիլենային խողովակներով, որոնք կանցկացվեն 0.4-0.5 մ խորության վրա, իսկ անցուղիներում՝ խողովակները կանցկացվեն Φ 150 մմ պողպատյա պատյանով:

6.1.7 Հուշարձանների վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները

121. Դպրոցի բակում առկա Ջ. Աբրահամյանի հուշարձանը շին աշխատանքների ընթացքում նախատեսվում է ապամոնտաժել և ժամանակավոր պահել դպրոցի բակում հատուկ հատկացրված հատվածում (հուշադրյուրի հարևանությամբ), տեղադիրքը

հաշվի է առնված հրապարակի կազմակերպման պլանում (*հավելված 8*): Հուշարձանի ժամանակավոր պահպանումը կիրականացվի պաստառներով ծածկված վիճակում, որպեսզի շին աշխատանքների ընթացքում բացառվի հուշարձանի վրա հնարավոր ֆիզիկական ազդեցությունները: Հուշարձանը կվերատեղադրվի տարածքի բարեկարգման գործողությունների իրականացման փուլում՝ ըստ նախագծի նախատեսվող վայրում:

122. Դպրոցի բակում առկա հուշադրյուրը չի ապամոնտաժվի՝ հաշվի առնելով հուշարձանի տեղադիրքը, ինչը չի խանգարում նախատեսվող շին գործողություններին: Նախատեսվում է հուշարձանը պաստառպատել շինարարական աշխատանքների ընթացքում, որպեսզի բացառվի շին գործողությունների ընթացքում ֆիզիկական վնասի ռիսկերը:

6.1.8 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

123. Ծրագիրը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

124. Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են ԲԿՊ-ի «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես *Հավելված 1*, ԲԿՊ): *Հավելված 4-ում* բերվում է նաև արտակարգ պատահարի հաշվետվության ձևը:

6.1.9 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

125. Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

126. Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ անթափանց տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան (ձևաչափը տես Հավելված 4), որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել: Բոլոր գրանցամատյանները կվերահսկվեն և կուսումնասիրվեն ՀՏԶ-ի կողմից բնապահապանական և սոցիալական մոնիտորինգային այցելությունների

ընթացքում, անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն իրազեկության բարձրացման միջոցառումներ:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

127. Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1 Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները

128. Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ-ում պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

129. Ծրագրի համար մշակված Բնապահպանական միջոցառումների ծրագիրը՝ մեղմացնող միջոցառումները և մոնիտորինգի պլանն, ամբողջական ներկայացված է *Հավելված 1 և 2-ում*:

130. ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

131. Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված *հիմնական բնապահպանական, ինչպես նաև աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումները*, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթածրագրի իրականացման բոլոր փուլերի ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում

- շինարական աղբի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին մինչև ժամը 18:00
- կիրականացվեն մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով
- շինարարական նյութերի ձեռք բերում կիրականացվի լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ համապատասխան հանգույցներից
- վառելիքի և նավթաման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում
- ենթածրագրի ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումները
- կապահովվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմին կտրամադրվի սեզոնային արտահագուստ, անձնական պաշտպանիչ միջոցները
- կիրականացվեն դպրոցի տարածքում առկա հուշարձանների պահպանման միջոցառումները
- տարածքի կանաչապատ գոտիները կհամալրվեն արժեքավոր բուսականությամբ
- կիրականացվի ազդեցության ենթարկվող ծառերի մի մասի վերատնկման միջոցառումները:

132. Ենթաձրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային ուղիղ արժեքը (առանց հարկերի) գնահատվում է 772.804 հազ ՀՀ դրամ: Նշված արժեքը (Աղ. 6) ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման, ծառերի վերատնկման և կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված դպրոցի նախագծի ծավալաթերթերում: Բնապահպանական կառավարման պլանում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի ենթաձրագրի շրջանակում հատկացվող օժանդակ ծախսերի գումարից, որը կազմում է ձրագրի արժեքի մոտ 2%-ը:

Աղյուսակ 6

Մեղմացնող միջոցառումների ուղիղ (հարկերը հաշվի չեն առնված) արժեքները:

Մեղմացնող միջոցառումը	Միավորը	Ծավալը/Քանակը	Գումարային արժեքը (հազ. ՀՀ դրամ)	Ժամանակացույցը
հանրային ծանուցում	հատ	2	10	նախագծման փուլ
բնապահպանական փորձաքննություն	հատ	1	15	նախագծման փուլ
շին աղբի (կառուցապատում) տեղափոխում	խ.մ	1 200	563.155	շինարարության փուլ
ծառերի տնկում	հատ	240	156	բարեկարգման աշխատանքներ
ծառերի վերատնկում	հատ	22	28.649	բարեկարգման աշխատանքներ
Ընդամենը՝ հազ. ՀՀ դրամ				772.804

6.2 Մոնիտորինգ

133. ՀՏԶՀ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏԶՀ-ի բնապահպանության երաշխիքների մասնագետները իրականացնելու է մոնիտորինգի դաշտային ստուգայցեր դպրոցի շինարարական տեղամաս ամսական երկու անգամ կտրվածքով: Մոնիտորինգային արդյունքները գրանցվելու են Ծրագրի շրջանակում մշակված մոնիտորինգի ստուգաթերթիկում:
134. ՀՏԶՀ-ն հանձնարարելու է տեխնիկական վերահսկող խորհրդատուին (ՏԽ) իրականացնել ամենօրյա հսկողություն: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՀՏԶՀ-ին նկատված անհամապատասխանությունների մասին:
135. Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել *փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներն* իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում: Բողոքների գրանցամատյանի ձևաչափը բերված է *Հավելված 3*-ում:

**7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**

136. Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում 2019 թվականի նոյեմբերի 14-ին, ժամը՝ 14:30-ին, Երևանի Ջ. Աբրահամյանի անվան թիվ 111 դպրոցի շենքում (Լուկաշինի 1-ին փողոց, 5 շենք հասցեում) իրականացվել է դպրոցի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2019 թվականի 01 նոյեմբերի համարում (թիվ 164): Դպրոցի կառուցման աշխատանքային նախագծի և ԲԿՊ-ի փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են ՀՏՁՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am)՝ գործող հանրային ծանուցման ընթացակարգին համաձայն (հանրային քննարկումն անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ):
137. Հանրային քննարկմանը ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ կառուցվող դպրոցի նախագծային կազմակերպությունից և ՀՏՁՀ-ից: Քննարկման արձանագրությունը կներկայացվի սույն հաշվետվությանը կից, իսկ մասնակիցների ցանկը (3 էջ, 31 մարդ) ներկայացվում է *Հավելված 10*-ում:
138. ՀՏՁՀ-ի կողմից ենթաճրագրի իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անդրադարձման մեխանիզմ՝ (ԲԱՄ) հաշվի առնելով ԱԶԲ պահաջները և ՍԱԲ ճրագրի առանձնահատկությունները: ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ներկայացված են ԲԿՊ-ում (*Հավելված 1*), իսկ բողոքների գրանցման ձևը բերվում է *Հավելված 3*-ում: Առավել մանրամասն տեղեկատվությունը շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ ներկայացված է ՀՏՁՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am):

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:

9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

9.1 Հավելված 1 Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ)

Աղյուսակ 1: Մեղմացնող միջոցառումներ					
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Միջոցառման իրականացման պատասխանատու մարմին	Մոնիտորինգի պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1.2-1.5%
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ					
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և նրա կանոնակարգման ձևերի որոշում	Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (հուլիս 2014 թ.) ըստ ազդեցության գործունեության դասակարգվում է «Գ» կատեգորիա:	1.1. Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում մշակվել և ՇՄՆ է ներկայացվել նախատեսվող գործունեության ՆԳՀ հաշվետվությունը:	«ԳԼՈՄՄԱ» ԱԿ	ՀՏԶՀ	
2. Հանրային քննարկումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	2.1. ՄԱԲ ծրագրի և դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ իրազեկում/քննարկումն իրականացվել է 2019 թվականի նոյեմբերի 14-	ՀՏԶՀ «ԳԼՈՄՄԱ» ԱԿ	ՀՏԶՀ	

		ին, ժամը՝ 14:30-ին, գործող դպրոցի շենքում:			
		2.2. Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում կիրականացվի դպրոցի կառուցման նախագծի և շրջակա միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունների և վերջիններս մեղմացնող միջոցառումների վերաբերյալ երկրորդ հանրային քննարկումը:	ՀՏՁՀ «ԳԼՈՄՄԱ» ԱԿ Երևանի քաղաքապետարան ՇՄԱՓԿ ՊՈԱԿ		
		2.3. Հանրային քննարկման (1-ին քննարկում) մասին հայտարարությունը, օրենքով սահմանված կարգով տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթերթի 01 նոյեմբերի 2019թ. համարում (թիվ 164):	ՀՏՁՀ «ԳԼՈՄՄԱ» ԱԿ		
		2.4. Հանրային լսումներում ներկայացվել է Ծրագրի շրջանակում գործող Բողոքների Անդրադարձման Մեխանիզմը (ԲԱՄ), որի ներդրումը կիրականացվի ՀՏՁՀ-ի	ՀՏՁՀ		

		կողմից սահմանված մեխանիզմին համաձայն (զանգահարել ՀՏՁՀ-ի թեժ գիծ և/կամ տես 4.1 ենթակետ):			
3. Մրցութային և պայմանագրային և փաստաթղթերի պատրաստում	ԲՄՄՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում:	3.1. Աշխատանքային նախագիծը մշակվել է հաշվի առնելով ԲՄՄՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	ՀՏՁՀ	ՀՏՁՀ	

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ)

1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան


4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲՄՄՊ-ի և դպրոցի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինհրապարակին կից գործող դպրոցի անձնակազմի և շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ	4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 4.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	
			Կապալառու		

	<p>ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:</p>	<p>արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, պաստառներ և այլն:</p> <p>4.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում:</p> <p>4.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:</p> <p>4.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>4.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	---	--	--

		<p>սարքավորումով, ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար:</p> <p>4.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՀՏՁՀ-ին:</p> <p>4.8. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում:</p> <p>4.9. Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</p>	<p>Կապավառու</p> <p>Կապավառու</p> <p>Կապավառու</p>		
--	--	---	--	--	--

2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան				
<p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին: Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը՝ համաձայն որի.</p> <p>Ա: Շինարարական հրապարակում՝ դպրոցի տարածքում, անհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ:</p> <p>Բ: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ այդ թվում ՀՏՁՀ-ի համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ:</p>	<p>ՀՏՁՀ Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ ՏՎԽ</p>

		<p>Գ. Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան: Բողոքի գրանցման ձևը տես Հավելված 1-ում:</p> <p>Դ. Անհրաժեշտ է նշանակել սոցիալական հարցերով զբաղվող պատասխանատու անձ, իսկ 15 օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:</p>			
3. Երջակա միջավայրի պահպանության պլան					
<p>5. Հողային աշխատանքներ:</p> <p>Շինանյութերի փոխադրումներ:</p> <p>Այլ շինարարական աշխատանքներ:</p>	<p>Դպրոցի հարակից տարածքում (5-50մ և ավելի հեռավորության վրա) առկա ազդակիրների, մասնավորապես՝ բնակելի և հանրային նշանակության կառույցների, փոքր բիզնեսի կետեր, վրա գնահատվում են փոշու և այլ վնասակար նյութերի արտանետումներ, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործումից առաջացած փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, - գոյություն ունեցող դպրոցի շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում փոշու արտանետումներ: 	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Օդի որակի չափազրույթներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</p> <p>5.1.2. Անհրաժեշտ է շինհրապարակում պարբերաբար իրականացնել փոշենստեցում՝ ջրցանի միջոցով, որպեսզի նվազագույնի բերվի արտանետված փոշու տարածումը հրապարակից սահմաններից</p>	<p>ՀՏՁՀ</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ</p> <p>ՏԿԽ</p>	

	 <p data-bbox="403 1323 793 1425">Գոյություն ունեցող շենքի ապամոնտաժման և նախագծվող դպրոցի շենքի</p>	<p data-bbox="821 198 1136 711"> դուրս: 5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը: Դրանք պահել պաստառներով ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումը կանխելու նպատակով: </p> <p data-bbox="821 717 1136 1133"> 5.1.4. Մեքենաների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել սահմանափակ 30կմ/ժ չգերազանցող արագությամբ երթևեկությունից առաջացող արտանետումները կրճատելու համար: </p> <p data-bbox="831 1205 1136 1305"> 5.2. Աղմուկի թրթռումների կատավարում </p> <p data-bbox="821 1312 1136 1412"> 5.2.1. Աշխատատեղերում աղմուկի թրթռումների </p>	<p data-bbox="1165 230 1325 259">Կապալառու</p> <p data-bbox="1165 717 1325 747">Կապալառու</p> <p data-bbox="1165 1312 1228 1341">ՀՏՁՀ</p>		
--	--	---	---	--	--

	<p>կառուցման աշխատանքների ընթացքում գնահատվում են աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p>	<p>մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին, իսկ չափազրումները կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:</p> <p>5.2.2. Անհրաժեշտ է խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են՝ մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, հասարակական շենքերը և այլն:</p> <p>5.2.3. Աղմուկ առաջացնող աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ 9-18:00:</p> <p>5.2.4. Բոլոր մեքենաները պետք է</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	---	--	--	--	--

	<p>Նախագծվող դպրոցի տարածքում առկա ծառերի և բուսականության վրա ազդեցություն:</p>	<p>ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>5.2.5. Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:</p> <p>5.2.6. Անհաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-ներով, այդ թվում՝ ականջակալներով:</p> <p>5.3. Բուսականության պահպանում և կառավարում</p> <p>5.3.1. Անհրաժեշտ է նախատեսել վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումներ, որպեսզի այդպիսի ծառերը լինեն հեշտությամբ ճանաչելի աշխատողների, տրանսպորտային միջոցների համար և պաշտպանված լինեն շին գործողություններից,</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	--	--	--	--

		<p>թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից:</p> <p>5.3.2. Ըստ անհրաժեշտության իրականացնել ազդեցության ենթարկվող բուսականության պաստառապատում և ջրցանում փոշու ազդեցությունները նվազեցնելու նպատակով:</p> <p>5.3.3. Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության ոռոգման միջոցառումներ շին-աշխատանքների ընթացքում:</p> <p>5.3.4. Անհրաժեշտ է խուսափել տարածքում պահպանվող ծառերի և թփերի հատումից, որոնք ազդեցության չեն ենթարկվում՝ համաձայն դպրոցի նախագծի:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Դպրոցի տնօրինություն</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	---	---	---	--	--

		<p>5.3.5. Անհրաժեշտ է իրականացնել ծառերի վերատնկման կամ հատման աշխատանքները Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծի» համաձայն:</p> <p>5.3.6. Անհրաժեշտ է բացառել տարածքում առկա հատված բուսականության այրումը:</p> <p>5.4. Բուսահողի պահպանում և կառավարում</p> <p>5.4.1. Անհրաժեշտ է առանձնացնել ազդեցության ենթակա բուսահողը, պահել այն տարածքում 2մ չզերազանցող կույտերի ձևով՝ հետագայում տարածքի</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	-----------------------------------	--	--

		<p>հեռացված կեղտաջրերը՝ հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, օգտագործել ջրցանման միջոցառումներում, իսկ չոր մնացորդը շին աղբի հետ հեռացնել աղբավայր կամ տարայում պահել այնքան մինչև ջրային ֆրակցիայի գոլորշիացումից հետո առաջացած չոր մնացորդը հնարավոր կլինի հեռացնել աղբավայր:</p>			
Ենթակառուցվածքների և այլ ազդակալիչ օբյեկտների կառավարման պլան					
6. Ենթակառուցվածքների և այլ ազդակալիչ օբյեկտների վրա ազդեցություն:	– Դպրոցի բակում առկա հուշարձանների (Ջ. Աբրահամյանի կիսանդրի և հուշաղբյուր) և էլեկտրական ենթակայանի վրա ազդեցություններ:	6.1. Դպրոցի շենքի ապամոնտաժման և կառուցման գործողություններն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որպեսզի բացառվի դպրոցի բակում գոյություն ունեցող հուշարձանների և էլեկտրական ենթակայանի վրա	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	

		<p>բացառելով այլ ազդակակիր տարածքների օգտագործումն առանց համապատասխան թույլտվության:</p> <p>7.2. Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>7.3. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում, ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող</p>	<p>Կապալառու «ԳԼՈՄՄԱ» ԱԿ</p> <p>Կապալառու</p>		
--	--	--	---	--	--

		<p>նշանների տեղադրում:</p> <p>7.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անհիմաստ բաց հորերի առկայությունը</p> <p>շինհրապարակում:</p> <p>7.5. Անհրաժեշտ է իրականացնել բաց հորերի և Յմ և ավելի բարձրությունների վրա աշխատելիս տեսանելի անվտանգության միջոցառումներ, ըստ անհրաժեշտության՝ նիշահարում, անվտանգության ձողեր, ժամանակավոր բազրիքներ աստիճանավանդակների շուրջ, նախազգուշացնող նշանների տեղադրման և այլ միջոցառումներ:</p> <p>7.6. Շինհրապարակի տարածքը պետք է</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	--	--	--

		պահել մաքուր և կարգավորված:			
6. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան					
8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ	<ul style="list-style-type: none"> • Դպրոցի մոտեցման ճանապարհի վիճակը գնահատվում է լավ երթևեկության կազմակերպման համար: • Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա գնահատվում են հետևյալ ազդեցությունները. <ul style="list-style-type: none"> → երթևեկության խափանումներ, → երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ, → փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ, → հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում, → շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին հնարավոր վնասներ: 	<p>8.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>8.2. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:</p> <p>8.3. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել դպրոցի մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհի</p>	Կապալառու	Կապալառու	Կապալառու
				ՀՏՁՀ ՏՎԽ	

		նախնական վիճակը:			
		8.4. Հնարավորինս պետք է խուսափել երթևեկել քաղաքային երթևեկության ծանրաբեռնված ժամերին:	Կապալառու		
		8.5. Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն:	Կապալառու		
		8.6. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:	Կապալառու		
		8.7. Վարորդները կվերապատրաստվեն ԵԿՊ-ի (Երթևեկության կառավարման պլանը) և անվտանգության վերաբերյալ:	Կապալառու		
		8.8. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված	Կապալառու		

		վայրերում: 8.9. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:	Կապալառու		
		8.10. Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի կլանիչներով և խլացուցիչներով:	Կապալառու		
		8.11. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:	Կապալառու		
		8.12. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:	Կապալառու		
		8.13. Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել	Կապալառու		

		<p>անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպճային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>8.14. Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների վիճակը պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի առկայությունը, իսկ տարածման դեպքում անհրաժեշտ է այն մաքրել:</p>	Կապալառու		
7. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան					
<p>9. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և</p>	<p>Վտեղիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>9.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես</p>	Կապալառու	ՀՏԶՀ ՏՎԽ	

այլն)		<p>ներկա կգտնվի շին հրապարակում:</p> <p>9.2. Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:</p> <p>9.3. Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում:</p> <p>9.4. Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
-------	--	--	--	--	--

		<p>նպատակով:</p> <p>10.7. Անհրաժեշտ է դպրոցի հին շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած նյութերը տեսակավորել երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերի և շին-աղբի:</p> <p>10.8. Առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը հեռացնել շինարար կապալառուի պահեստամաս այլ աշխատանքներում օգտագործելու նպատակով, իսկ գոյացած աղբը տեղափոխել աղբավայր (տես 10.5 ենթակետ):</p>	Կապալառու		
9. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ					
11. Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	11.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲՄՄՊ պահանջների մասին դասընթացներ այդ թվում թափոնների	ՀՏՁՀ Կապալառու	ՀՏՁՀ	

		<p>ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն:</p> <p>11.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին:</p> <p>11.3. Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրազեկել ԵԿՊ-ի վերաբերյալ:</p>	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	
10. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան					
<p>12. Շինհրապարակի վերականգնումը</p> <p>Դպրոցի տարածքի բարեկարգում/կանաչապատում</p>	<ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները: 	<p>12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն:</p> <p>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր</p>	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	

		<p>վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները, ապամոնտաժման և վերատեղադրման աշխատանքները:</p> <p>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուրի, վառելիքի արտահոսքի հետքերը:</p> <p>12.4. Անհրաժեշտ է իրականացնել ՀՏՁՀ-ի կողմից մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները:</p> <p>12.5. Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծի» համաձայն:</p>	Կապալառու		
ՀԵՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ					
13. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	13.1. Անհրաժեշտ է ապահովել կանաչ զանգվածի և տնկված ծառերի 90%	Դպրոցի տնօրինություն/ Կապալառու	ՀՏՁՀ Կապալառու	

9.2 Հավելված 2 Բնապահպանական միջոցառումների մոնիտորինգի պլան

Աղյուսակ2: Բնապահպանական կառավարման պլան՝ մոնիտորինգ						
Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
1. Աշխատանք ունենալու հնարավորություններ	Աշխատուժը համալրված է տեղաբնակներով, աշխատանքներում ներգրավված են արդյոք կանայք	Բոլոր շինարարական տեղամասերը	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապալառու ի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	ՀՏԶ ՎԽ	Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում

<p>2. Հասարակական լուսմներ և կապը հանրության հետ</p>	<p>Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակիր կողմերի տեղեկացվածություն Ծրագրի Բողոքների արձագանքման մեխանիզմի վերաբերյալ</p>	<p>Բոլոր շին տեղամասեր</p>	<p>Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր Հանրային լուսմներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ</p>	<p>Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է ԲԳՈՒՇ-ում նկարագրված բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան</p>	<p>ՀՏԶ</p>	<p>Հանրային լուսմները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: ԲԱՄ-ը՝ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>3. Տարածքի մաքրում բուսականությունից</p>	<p>Տարածքի մաքրումը բուսականությունից հնարավորինս նվազագույնի է հասցված Շինհրապարակի մերձակայքի բուսականությունը պաշտպանված է</p>	<p>Բոլոր շին տեղամասեր</p>	<p>Տարածքի բուսականություն ից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում Շին. հրապարակի ստուգայցեր</p>	<p>Հատված թփերի գրանցամատյանը առկա է</p>	<p>ՀՏԶ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>4. Շրջակա միջավայրի պահպանություն</p>	<p>Նստվածքների առաջացում Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ Աղմուկի թրթռումների մակարդակի բարձրացում</p>	<p>Բոլոր շին տեղամասեր: Շինհրապարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ</p>	<p>Ակնադիտական ստուգումներ շինհրապարակի ստուգայցերի միջոցով: Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում: Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և</p>	<p>Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը: Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում:</p>	<p>ՀՏԶ ՎԽ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>

			վերլուծություն բողոքների առկայության դեպքում:			
5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում: Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի գտնվելու վայրը և հատակագիծը համապատասխանում են պետմարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՀՏԶԶ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը: Դպրոցներին, դասերին և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը	Ճանապարհների օգտագործում, սարքավորումների և Նյութերի տեղափոխության համար: Շինհրապարա	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն	ՀՏԶԶ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	Ճանապարհներին և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	կի մոտեցման մուտքերը		ու կարևորությունը		
7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Բոլոր շինարարական տեղամասերը	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևը լրացված է: Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:	ՀՏԶՀ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
8. Թափոնների և շին. նյութերի կառավարում	Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	Բոլոր շինարարական տեղամասերը	Փաստաթղթերի ստուգում: Շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:	Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում		

				է:		
9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	<p>Շինհրապարակը մաքրված է, նութերը և թափոնները հեռացված են:</p> <p>Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են:</p> <p>Շինհրապարակի տարածքը բարեկարգված է:</p>	Տեղամասեր կատարած ստուգայցեր	Շինհրապարակի վերա-կանգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	<p>Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին:</p> <p>Ապահովված է թփերի 90% կաշտղականությունը</p>	ՀՏՁՀՎԽ	
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ						
10.Թերությունների վերացման աշխատանքներ	Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	Դպրոցի տարածքի սահմաններում	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին	ՀՏՁՀ	
11.Տարածքի	Թփերի և այլ	Կանաչապատ	Ստուգայցեր	Թփերի և	ՀՏՁՀ	

բարեկարգում	բուսականության նորմալ աճ	ման բոլոր տեղամասերը		խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	Դպրոցի տնօրինություն	
-------------	--------------------------	----------------------	--	--	----------------------	--


9.3 Հավելված 3 Բողոքի գրանցման ձև

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (դպրոցի դասատու, աշակերտ, ծնող, հարևան, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված ՀՏԶՀ-ին/ չլուծված)


9.4 Հավելված 4 Արտակարգ պատահարի մասին հաշվետվության ձև

Պատահարի ամիս/ ամսաթիվը	Պատահարի նկարագրությունը	Պատահարի վերացման միջոցառումները	Միջոցառումների ժամկետները և պատասխանատուն	Պատահարի վերացման կարգավիճակը


9.5 Հավելված 5 Անշարժ գույքի սեփականության վկայական




9.6 Հավելված 6 Դպրոցի առաջին հարկի հաստակագիծը




9.7 Հավելված 7 Դպրոցի երկրորդ հարկի հատակագիծ



9.9 Հավելված 9 Շինարարական աշխատանքների ժամանակացույցը



9.10 Հավելված 10 Հանրային քննարկման մասնակիցների ցանկ


ԱՆՑԱՄԻԿ ԱՎՏԱՆՎՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՆԱԿԱՆ ՕՐԱԿԻՐ
 Երևանի Զ. Սքրախյանի անվան թիվ 111 հիմնական դպրոց
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ
 Հոկտեմբերի 14, 2019թ.
 Հասցե՝ Ա. Լուսապետի 1-ին փ. շ. 5
 Մասնակիցների ցանկ

N	Ազգանուն/անուն	Զբաղվածություն	Ստորագր.
1	Սասնաբերյան Դիմեհյան	ուսուցչուհի	Սասնաբ
2	Ռեհանյանցյան Տիգրան	Տնօր	Տիգրան
3	Բարսեղյան Կերիսե	Տնօր	Կերիսե
4	Փարսյան Տիգրան	Տնօր	Տիգրան
5	Վահանյան Գրիգոր	Տնօր	Վահան
6	Փարսյան Բիսմիլ	Տնօր	Փարսյան
7	Նահապետյան Գրիգոր	Տնօր	Նահապետ

N	Ազգանուն/անուն	Զբաղվածություն	Ստորագր.
8	Գրսուսյանցյան Պարսիկ	Տնօր	Պարսիկ
9	Նուսրիսյան Ռաբիբ	Տնօր	Նուսրիս
10	Արտեմիանյան Վիկտորյան	փոխդասուհի	Արտեմ
11	Վահանյան Պետր	ուսուցչուհի	Վահան
12	Քեհեկյան Կարգապետ	զբաղմունքային	Քեհեկ
13	Գրիգորյան Նարինե	ուսուցչուհի	Գրիգոր
14	Խոսրոբյան Գրայան	փոխդասուհի	Խոսրոբ
15	Նոնյանցյան Լուսին	դասուցչուհի	Նոնյանց
16	Վարդանյան Երոտիկ	ուսուցչուհի	Վարդան
17	Փարսյան Դեմիտրի	Տնօր/փոխդասուհի	Փարսյան
18	Նահապետյան Ռուստե	ուսուցչուհի	Նահապետ

19	Սահակյան Գրիգորյան	Տնօր/փոխդասուհի	Սահակ
20	Սարգսյան Կարսիկ	Տնօր	Կարսիկ
21	Պարսյանցյան Էսմիրա	ուսուցչուհի	Պարսյան
22	Արմենյան Եսմիրա	ուսուցչուհի	Արմեն
23	Պարսյան Օհանես	ուսուցչուհի	Պարսյան
24	Ասլանյան Նարինե	ուսուցչուհի	Ասլան
25	Չանկյան Լուսինյան	Տնօր/փոխդասուհի	Չանկյան
26	Գրիգորյան Լուսինյան	Տնօր	Գրիգոր
27	Վահանյան Գրիգոր	Տնօր/փոխդասուհի	Վահան
28	Մանուկյան Կարսիկ	"Գրանտ" ԱԳ	Մանուկ
29	Պետրոսյան Արթուր	"Գրանտ" ԱԳ	Պետրոս
30	Գրիգորյան Լուսին	"Գրանտ" ԱԳ	Գրիգոր
31	Փարսյան Կարսիկ	ԿՐԹԱԸ	Փարսյան

